




ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԿՈՐԱՀԱՅՏ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ՎԱՐՔ)

Թարգմանություն հունարեն բնագրից՝ Հ. ՐԱՐԹԻՄՅԱՆԻ
Առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ

Հայադիտության ամենաշատ ուսումնասիրված բնագավառներից է Ագաթանգեղադիտությունը: Ժամանակի ընթացքում Ագաթանգեղոսի Պատմության բազմաթիվ և բազմալեզու խմբագրություններ են մեղ հասել: Այսուհանգերձ Հայադիտության այս ճյուղը միշտ հղի է անակնկալներով և ցնցող նորություններով, որոնք անհրաժեշտություն են ստեղծում լրացումներ կատարելու:

Մեր միջնադարյան պատմագրության առջին երկը համարված Ագաթանգեղոսի Պատմությունը դեռևս ԺԸ դարում ունեցավ մի քանի խմբագրությունների հրատարակություններ: Դարի սկզբին լույս տեսավ հայկական բնագիրը¹, իսկ դարի կեսերին հունարեն և լատիներեն խմբագրություններ²: Վերջիններիս հրատարակիչ Հ. Ստիլտինգը քննարկման ենթարկելով այս երկը տարալուսանք էր հայտնել պատմական տեղեկությունների հավաստիության հարցում, որին հակաճառեց Մ. Չամչյանը իր Հայոց պատմության³ մեջ:

¹ Գիրք վիպասանութեան որ կոչի հոմանունակի Ագաթանգեղոս, ... Յամի... Ռէճթ ... ի քաղաքիս Կոստանդնուպոլսոյ... ձեռամբ Գրիգորի ղպրի որդւոյ Մկրտիչ Մարդուաննեցոյ:

² Acta Sanctarum, Septembris, t. VIII. Antverpiae, 1702.

³ Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Ա., Վենետիկ, 1784, էջ 668—679:

ԺԹ դարում իրար հաջորդեցին այլևայլ լեզուներով գոյություն ունեցող խմբագրությունների լույս ընծայումը⁴ և հունական խմբագրության քննական հրատարակությունը Պ. Ղը Լադարդի⁵ ձեռքով: Դարի վերջում արդեն ամբողջ մենագրություններ⁶ նվիրվեցին Ագաթանգեղոսի Պատմության բազմաթիվ հարցերի պարզաբանմանը:

Սակայն այս բոլոր խմբագրությունները պտտվում են նույն կենտրոնի շուրջը. նրանք բոլորն էլ մեղ հասած միակ հայկական բնագրի թարգմանությունը կամ համառոտումներն են:

Ագաթանգեղոսի Պատմության մեղ հասած հայկական բնագիրը իր արմատներով հասնում է Ս Դար: Մոտավորապես երկու դար հետո նա թարգմանվել է հունարեն, որից հետո նրա սկզբում կցվել է Արտաշրի ապստամբության մասին փոքրիկ հատված:

⁴ Տե՛ս՝ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, Ա., էջ 174—183:

⁵ Agathangelus und die Akten Gregors von Armenien, Göttingen, 1887.

⁶ A. v. Gutschmid. Ag thangelos, I. et pz'g. 1877: Ռ. Ուրգեսեան, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան շաղտնիքն, Վենետիկ, 1890:

Հ. Տաշեան, Ագաթանգեղոս առ Գեորգայ ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ րոց, Վիեննա, 1891:

Սրանից մեզ հասել է մեկ ամբողջական ձեռագիր (Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարան VIII—25): Հունական թարգմանությունը ժ դարում ամփոփվել է Սիմեոն Մետափրաստեսի ձեռքով և մտցվել հունական Հայսմավուրքի մեջ: Ինչպես այժմ հայտնի է վերջինս թարգմանվել է վրացերեն և այլ լեզուներով: Ազաթանգեղոսի հունական թարգմանությունից է ըստ երևույթին օգտվել Գևորգ Ասորին, որը 714-ին գրած իր թղթում տալիս է Գրիգոր Լուսավորչի գործունեության համառոտ նկարագրությունը: Հունականից է ծագում նաև լատինական համառոտ խմբագրությունը, որը կատարվել է ԺԲ դարում: Այս բաղադրված խմբագրություններն առանց բացատրության առնչվում են այն հայկական բնագրին, որը կրում է «Ազաթանգեղայ Պատմություն Հայոց» խորագիրը⁹:

Ազաթանգեղագիտության մեջ արմատական հեղաշրջում էր նկկողալու Մառի կողմից 1902 թվականին արաբական խմբագրության հայտնաբերումը, որի հրատարակումը և ուսումնասիրությունը⁸ պարզեց մի չափազանց կարևոր հանգամանք՝ որ մեզ հասած հայկական բնագիրը միակ խմբագրությունը չէ, որ գոյություն է ունեցել Հայոց դարձի նյութի շուրջը: Ն. Մառը իրավացիորեն ենթադրում է, որ նորահայտ արաբական խմբագրությունը պետք է թարգմանված լիներ հունարենից, որն իր հերթին պիտի ունենար մի հայկական մեզ չհասած բնագիր օրինակ:

Բաղում նոր կոահումների և եղրահանդումների առիթ տվեց արաբական խմբագրության հայտնաբերումը: Լուծելու համար սրա և մինչ այդ հայտնի բաղադրված խմբագրությունների փոխհարաբերությունը, Ն. Մառը մի ամբողջ տեսություն ստեղծեց: Ըստ նրան, Ե դարում եղել է Ազաթանգեղոսի ասաջին խմբագրությունը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով կաղմված: Սա թարգմանվել է հունարեն, որից օգտվել է Գևորգ Ասորին 714 թ. և այս կտրել է: Երկրորդ խմբագրությունը կաղմվել է քաղկեդոնական հայերի միջավայրում, որը թարգմանվել է հունարեն և այս արաբերեն: Վերջինս նրա «(Մառի) ձեռքով հայտնաբերված խմբագրությունն է: Ը գարում հակադրվելով հունական հայ սղդային և կեղեցիկ կաղմում է երրորդ խմբագրությունը, հենց այն, որ մեզ հասել է իր

հայկական բնագրով և հունարեն թարգմանությամբ և այլն:

Լեզուներով հանդերձ երեք խմբագրությունների գոյությունը, Ն. Աղոնցը⁹ որոշ ուղղում է առաջարկում Ն. Մառի մշակած տեսության մեջ: Նա չի ժխտում, որ Մեսրոպ Մաշտոցը կարող էր մշակած լինել Գրիգոր Լուսավորչի մասին գոյություն ունեցող վարքագրական և այլ կարգի նյութերը որպես՝ Վարք Գրիգորի: Բացի դրանից նա հավանական է գտնում, որ նույնանման աշխատանք կարող էր կատարած լինել նաև Կորյունը: Սակայն երկրորդ խմբագրությունը նա համարում է է դարի սկզբին ապրած Նդնակ Լեռնի աշխատանքը, որը ըստ Աղոնցի վերախմբագրել է ոչ միայն Գրիգորի վարքը, այլև Մաշտոցի վարքը (Կորյունի): Անկախ խմբագրող մատենագրի անձնավորությունից, Ն. Աղոնցը Լերկորդ խմբագրությունը համարում է Զ դարի վերջի և է դարի սկզբի գործ, քանի որ հայ նախալարությունների և եկեղեցական թեմերի (եպիսկոպոսությունների) ցուցակներում տարբերություն կա մեզ ծանոթ հայկական բնագրի և արաբական խմբագրության միջև, ընդ որում երկրորդի մեջ այս ցուցակները համապատասխանում են Զ դարի վերջի իրադրությանը:

Ն. Մառի և լեռնագրությունը այն մասին, թե անկասկած պիտի եղած լինի այս խմբագրության հունական օրինակը հաստատվեց, երբ բելգիացի հայագետ և քրիստոնյա արևելքի ակնաւոր գիտակ պլոֆ. Ժ. Գարիտտը հրատարակեց իր հայտնաբերած հունական նոր խմբագրությունը: Համեմատելով այս խմբագրությունը արաբականի հետ Ժ. Գարիտտը այն եղրակացության հանգեց, որ արաբականը հունականի թարգմանությունն է որոշ շեղումներով հանդերձ: Հունական նորահայտ խմբագրությունը ոչ միայն բանասիրական մեծ արժեք ունի, այլև տալիս է պատմական նոր տվյալներ, որոնք պակասում են մեզ ծանոթ հայկական բնագրի մեջ և նույնիսկ արաբական խմբագրության մեջ, թեև վերջինս հիմնականում նրանից է թարգմանված:

Այսպիսով մինչև այժմ հայտնի բոլոր խմբագրությունները բաժանվում են երկու հիմնական խմբի. Ա խումբը մեզ հասած հայկական բնագրի՝ բուն Ազաթանգեղոսի Պատմության տարբերակներն (հունական թարգմանություն¹⁰, Մետափրաստյան օրի-

⁹ Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Դ. ՏԼԻ Մկրտչեան և Ստ. Կաճայեանց, Տփղիս, 1909:

⁸ Н. Марр, Крещение Армян, Грузин, Абхазов и Атапов святым Григорием (Арабская версия). С. Петербург. 1905.

⁹ Н. Алош. Армения в эпоху Юстиниана Спб, 1908. стр. 341-342.

¹⁰ Այժմ մեր ձեռքի տակ է նաև այս հունականից կատարված արաբերեն ձեռագիր թարգմանությունը:

նակ և այլն) են: Բ խումբը մեզ չհասած հայկական բնագրի հունական և արաբական թարգմանություններն են: Այս խմբագրությունը Ժ. Գարիտտի և ապա Ն. Ակինյանի կողմից մկրտվել է որպես «Վարք»:

Նորահայտ խմբագրության գրչագիրը գտնվում է Իսպանիայի էսքուրիալի մատենադարանում և 1107 թվականն է կրում¹¹: Պարունակում է սրբերի վարքեր, ճառեր, բարոգներ և այլն: Ըստ Ժ. Գարիտտի նյութի այս խայտաբղետությունն է, որ էսքուրիալի ձեռագրացուցակում նշված «Մարտիրոսութիւն սրբոյն Գրիգորի» անունը խանգարել էր կոահելու նրա արժեքը, թեև գրչագրի հենց ժամանակը պետք էր հետաքրքրություն արթնացներ բանասերների մեջ:

Ձեռագրի հիշատակարանում կա գրչի անունը՝ Լեոնտիոս, որը արտագրել է այն Սիկիլիա կղզու Ս. Փիլիպպոս վանքում: ԺՁ դարում նա արդեն հիշվում է էսքուրիալի ձեռագրերի մեջ: Գրչագիրը հիմնականում մագաղաթից է (բացի վերջին թղթի թերթերից, որոնք ժՁ դարից են) և ինչպես ասվեց կրում է 1107 թվականը: Ս. Գրիգորի վարքը զբաղեցնում է 241բ—262ա երեսները:

Դժվար է ասել, թե որտեղից և ի՞նչ ճանապարհով այս գրչագրի մայր օրինակը հասել է Սիկիլիա: Հայտնի չէ թե արաբական տիրապետության շրջանում (Թ—ԺԱ դդ.) էր Սիկիլիա բերվել, թե նորմանների նվաճումից հետո:

Ձեռագրի լեզուն անպաճույճ է և հունարենի թարգմանիչը բոլորովին չի ջանացել մեռած մատենագրական լեզվի կանոններին հավատարիմ մնալ, առատորեն օգտագործելով ռամկաբանություններ: Ուստի դժվար է խոսել առանձին լեզվական շեղումների մասին, քանի որ ռամկաբանություններ գերիշխում են¹²:

Հունական նորահայտ վարքի հատուկ անունների բերականության և ոճի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ սա հայկական մի կորած բնագրից է թարգմանված: Հայ մատենագրությունը ոչ միայն վերցրել է օտարներից, այլև որոշ բան ինքն է հաղորդել միջնադարյան աշխարհին: Ժ. Գարիտտը հատուկ գլխի տակ նշում է հունական վարքի հայկաբանությունները: Կան բազմաթիվ ոճական ձևեր, որոնք հատուկ չեն հունարենին, բայց երբ նկատի ենք առնում համապատասխան հայկական

ձևերը պարզ է դառնում թե ինչքան շատ է թարգմանիչը (որն ըստ Ժ. Գարիտտի հույն պետք է լիներ): Ենթարկվել հայկական բնագրին: Սա առավել ևս ցայտուն է դառնում հատուկ անունների փոխադրման ժամանակ, երբ հայկական Մովսես, Տալոց ձևերի հոլովական (հոգնակի սեռական) վերջավորության վրա ավելանում է հունականը:

Հունական վարքի սկիզբը թեև պակաս թերթեր չունի, այնուամենայնիվ առաջին հայացքից երևում է, որ արվեստական է: Ժ. Գարիտտը իրավացիորեն ենթադրում է, որ թարգմանիչը կամ այլ ոք կրճատումներ են կատարել: Արաբական վարքի գրչագրի առաջին թերթերը պակասում են և շատ հետաքրքրական կլինեին, եթե մենք այս խմբագրության՝ վարքի բուն սկիզբը իմանայինք: Դժբախտաբար հունական վարքը նույնպես այս հարցում մեզ չի օգնում: Այստեղ չկան ոչ միայն հայկական Ագաթանգեղոսի առաջաբանի և հունական Ագաթանգեղոսի սկզբնական հատվածի (Արտաշրի ապստամբության) նյութերը, այլև պակասում է նույնիսկ այնպիսի հիմնական մաս, ինչպիսին է հոսսրովի և Տրդատի պատմությունը: Ն. Ակինյանի այն վարկածը¹³, թե Արտաշրի ապստամբության մասին հունական Ագաթանգեղոսին կցված առեղծվածային հատվածը իր ժամանակին այս վարքի կրճատված մասից է հանվել՝ կարիք է զգում ավելի ուժեղ փաստարկներին:

Սակայն հունական վարքի կողմնակի ակնարկներից պարզվում է, որ հոսսրովի և Տրդատի պատմության հատվածը նախապես եղել է նրա սկզբում: Տրդատն ու Գրիգորը զրույցի ընթացքում հիշեցնում են իրենց հին հարաբերությունները: Դիոկլետիանոսին գրած նամակում Տրդատը հիշում է, որ ինքը դաստիարակվել է հռոմայեցիների մոտ, իսկ Գրիգորը՝ քրիստոնյա Կեսարիայում: Կեսարիո Ղևոնդիոս արքեպիսկոպոսին գրած նամակում Տրդատը հիշում է իր հին մեղքերը և Գրիգորի մարտիրոսությունը, ինչպես նաև այն, որ ինքը եղել է Լիկիանոսի մոտ: Այս բոլորի (ինչպես նաև այլ հետքեր)¹⁴ հստակ կերպով ցույց են տալիս, որ այս բաժինը իրոք եղել է և միայն հետագայում է կրճատվել:

Հունական վարքն սկսում է Գրիգորի մարտիրոսության բաժնով, որի սկիզբը նույնպես

¹³ Documents, p. 337.

¹¹ G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange. Citta del Vaticano, MCMLXVI, p. 156—161.

¹² Documents, p. 162—164.

¹⁴ Ն. Ակինյան. Արտաշիր Բարականի վեպը յոնաբէն Ագաթանգեղոսի մեջ և Ս. Գրիգորի նորագիտ յոնաբէն վարքը, Հանգէս ամսօրեայ, 1947, էջ 567—581.

¹⁵ Documents, p. 279—283.

կրճատված է, Այս բաժինը մեծ մասամբ հակիրճ է և այդ տեսակետից տարբերվում է հայկական և հունական Ազաթանգեղոսից և նույնիսկ արաբական Վարքից, թեև հունարեն և արաբերեն վարքերն ունեն միայն իրենց հատուկ առանձին դժբեր, Գրեթե նույն վիճակում է նաև Հոփսիսմեանց նահատակության բաժինը:

Պատմական տեսակետից հունական Վարքի կարևոր հատվածներից է Գրիգոր Լուսավորչի կնոջ (Յուլիտա հայ. Յուդիտայ) մասին պատմող բաժինը: Հայկական Ազաթանգեղոսը չի խոսում նրա կնոջ մասին, այլ շատ հակիրճ և լակոնական ոճով ասվում է, որ Տրդատ թագավորին տեղեկացրին, թե Գրիգորը «մինչ ղեռի մանկության արտիսն էր ղինուորութամբ՝ տմուսնացեալ և երկուս որդիս ստացեալ»¹⁶, նույնիսկ արաբական Վարքը չունի այս հատվածը: Գրիգորի կնոջ մասին խոսվում է ավելի ուշ շրջանում: Կապաղովկիայում ստացած նրա ուսման մասին խոսելիս հիշվում է, որ նա «Իբրև եղև երկու տասնամեայ այր ոմն աստուածապաշտ, որ կոչէր Դաւիթ, ամուսնացուցանէ գնա ընդ դստեր իւրում, որ կոչիւր Մարիամ: Արդ, իբրև եղէն նորա երկուս որդիք, անուն անդրանկին Վրթանէս և կրտսերուն Ռստակէս մայրն եմուտ ի վանս կանանց...»¹⁷:

Ամենայն հավանականությամբ Ե դարի իր նախնական ձևի մեջ հայկական Ազաթանգեղոսն ունեցել է Գրիգորի կնոջ մասին վերոհիշյալ հատվածը, սակայն ժամանակի ընթացքում, երբ կուսակրոնության գաղափարը ավելի և ավելի է արմատացել, այդ հատվածը խորթ է թվացել և կարիք է դրացվել ջնջել այդ տողերը: Հաղիվ թե հունական Վարքի թարգմանիչը կամ խմբագրողը իրենց երևակայությունից հնարեին Գրիգորի կնոջ հատվածը, քանի որ միջնադարում սրբի կին ունենալու փաստը հավասարապես խորթ էր ոչ միայն Հայաստանում, այլև բնականաբար հունական միջավայրում և ամենուրեք:

Հաջորդ բաժինների մեջ (Հայոց դարձը, Ս. Գրիգորի ձեռնագրությունը, Կոստանտին կայսեր մոտ այցելությունը և այլն) հունական Վարքը ցույց է տալիս իր ինքնուրույնությունը: Որոշ դեպքերում նա ավելի մանրամասն է, քան հայկական և հունական Ազաթանգեղոսը, իսկ այլ տեղերում ընդհակառակը՝ համառոտ: Ընդհանրապես եթե համեմատենք հայկական ու հունական Ազաթանգեղոսը հունական ու արաբական Վարքերի հետ կտեսնենք որ առաջինների հետ համեմատելիս հունական Վարքն ավելի

լինքնուրույն է, քան արաբականը, որը համեմատաբար մոտ է կանգնած հայկական Ազաթանգեղոսին:

Այսպիսով, վաղ միջնադարում եղել է մի հայկական Վարք, որը մեզ չի հասել: Սա հունարեն է թարգմանվել մի հույն թարգմանչի ձեռքով, ապա որոշ մասերում կրճատվել և դարձել ինքնուրույն խմբագրություն: Վերջինս թարգմանվել է արաբերեն, որը նույնպես ինքնուրույն է, քանի որ բառացիորեն չի համընկնում հունականի հետ:

Հունական Վարքի հայտնաբերումը հնարավորություն ընձեռեց Ժ. Գարիտաին իր մանրակրկիտ ուսումնասիրությունը ավարտելուց հետո, վերանայել¹⁸ Ն. Մաոփի տեսակետները և արաբական Վարքի հրատարակման առթիվ նրա առաջարկած տեսությունը: Նորահայտ հունական Վարքը հաստատում է Ն. Մաոփի այն ենթադրությունը, թե իր հայտնաբերած արաբական խմբագրությունը պետք էր թարգմանված լիներ հունականից, իսկ վերջինս էլ իր հերթին՝ հայկականից:

Սակայն Մաոփի այն տեսակետը, թե այս խմբագրությունը (Վարքը) քաղկեդոնական միջավայրում է կազմվել, Ժ. Գարիտաի մոտ տարակուսանք է առաջացնում: Ձեռագրի Սինայի ուղղափառ վանքում գտնվելը կամ թերթերի վրացական համարակալում ունենալը բոլորովին էլ չէին կարող ապացուցել նրա քաղկեդոնական ծագումը¹⁹: Ն. Մաոփի այն վարկածը, թե Հայոց, Վրաց, Լագերի և Աղվանից հիշատակումը որպես մեկ ամբողջություն, է դարի խզումից հետո կարող էր ընդունելի լինել միայն քաղկեդոնիկ հայի կողմից, նույնպես բավարար կովաններ չունի: Իսկ ինչու չենթադրել, որ հայկական կորած բնագրի հեղինակը չի ուղեցել այսպիսով շեշտել հենց Հայաստանեայց եկեղեցու դեմակշռությունը մյուս Կովկասյան եկեղեցիների նկատմամբ: Գրիգոր Լուսավորչի տեսիլքի մեջ սպիտակ ոչխարների հոտից սևերի անջատումը Մաոփ համարում էր հակաքաղկեդոնականներին ուղղված ակնարկ: Սա ևս շատ անորոշ փաստարկ է, քանի որ նույնը հիշվում է նաև հայկական Ազաթանգեղոսի մեջ:

Տարակուսանք է առաջացնում նաև Տայքի միջավայրի մասին Ն. Մաոփի վարկածը, որի կովաններից մեկը որոշ տեղանունների մեջ

¹⁸ Documents, p. 338—350.

¹⁹ Ի դեպ նույն ուղղափառ վանքում վերջերս հայտնի դարձավ նաև արաբական թարգմանությունը հենց Ազաթանգեղոսի պատմության, որը Ն. Մաոփի կողմից համարվել էր հայ աղային եկեղեցու հակաքաղկեդոնական խմբագրություն:

¹⁶ Աղաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, 1909, էջ 449.

¹⁷ Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 72:

վրացական ձևով (աթ) վերջածանցների առկայությունն է: Նորահայտ հունական խմբագրության մեջ համապատասխան տեղերում այդ տեղանունները նույնպես ունեն նման վերջավորություններ և այն էլ հունարենի համար շատ օրինաչափ ձևով: Մառը հենվում էր նաև Աղձնիք տեղանվան փոխարեն նախարարների ցուցակում արաբական Վարքի մեջ Արտանուզ անվան գոյության փաստի վրա: Սակայն հունական նորահայտ խմբագրության մեջ նույն տեղում գրված է 'Αντζή, որը Աղձնիքի հունական ձևն է: Հետաքրքրական և կտրուկ է այս հարցում Ն. Ագոնցի գեո իր ժամանակին հայտնած տեսակետը, որ Արտանուզ անունը համարում էր սոսկ գրչական սխալ և տուաչարկում էր կարգալ Արգանուն (Αργάνη) որը շատ հավանական է:

Հունարեն Վարքի հայտնաբերումը և ուսումնասիրումը մեծ նշանակություն ունեցավ ազաթանգեղագիտության համար, մանավանդ մեծ չափով պարզվեց «Վարք» կոչված խմբագրության էությունը: Մառի հայտնաբերած արաբական Վարքը և նրա ուսումնասիրությունը առաջին վճռական քայլն էր այս հարցում: Երկրորդ և կարևոր քայլը արվեց Ժ. Գարիտտի հունարեն Վարքի լույս ընծայմամբ և նրան աղբյուրներ փայլուն ուսումնասիրությամբ: Հայագիտությունն այժմ սպասում է Վարքի հայկական բնագրի հայտնաբերմանը²¹:

Վարք և վկայաբանություն. Մեծ Հայքի սուրբ և փառավորյալ Գրիգորի վկայի!

(Πράξει: καὶ μαρτυροῦν τοῦ ἀγίου καὶ ἐνδόξου ἱερομάρτυρος Γρηγορίου ἡγ. Μεγαλ. Ἀρμενίας)

1. Այն ժամանակները, երբ Մեծ Հայքում թագավորում էր Տրդատը, տեղի էր ունենում քրիստոնյաների մեծ հալածանք: Թագավորն ասում է սուրբ Գրիգորին,

«H. Aton, Arménie en l'époque d'Ostienne» стр. 293 (ծանոթ. 3):

²¹ Վերջերս Օթրիգայում (Մակեդոնիա, Հարավսլավիա) Ս. Գրիգորի մի հունական Վարք հայտնաբերվեց F. Halkin, Manuscripts byzantins d'Ochrida, Anal. Boll., t. 80. fasc. 1—2, 1932), որը մասամբ համապատասխանում է Ազաթանգեղոսի Պատմությանը, իսկ մասամբ արաբական Վարքին (G. Garitte, La vie grecque inédite de S. Grégoire d'Arménie, Anal. Boll., t. 83. f. 3—4, 1965) Այս խառնածին բնագիրը՝ Օթրիգայի Վարքը, Ազաթանգեղոսի երկու խմբագրությունների միջև միացման օղակ է կազմում:

¹ Թարգմանությունը կատարվել է Ժ. Գարիտտի հրատարակած հունարեն բնագրից. տե՛ս G. Garitte, Documents, p. 23-116:

երբ (վերջինս) ներկայացավ նրան. «Ե՛կ, ով Գրիգոր, գո՛ւ մատուցիր աստվածներին և կլինես մեր սիրելին. ինչպես նախկինում: Իսկ սուրբ Գրիգորն ասում է թագավորին. «Ո՛վ թագավոր, ես այդ չեմ անի. չեմ սպասարկի կուռքերին, ոչ էլ մեռելներին որևէ գո՛ւ կմատուցեմ»:

2. Թագավորն ասում է. «Ե՛րբ գու իմ մոտ եկար ասացիր, որ Հայոց աշխարհի առաջիններից ես, բայց այժմ չի երեւում ո՛չ քո ազնվական ծագումը, ո՛չ էլ քո (հույակված) երկիրը: Մեր սիրելին դարձավ անհայտ և անծանոթ մեկը: Բայց դու, ինչպե՛ս չես ուզում սպասարկել աստվածներին, որոնց մենք սպասարկում ենք և չենք դժուար նախնիների սովորությունները: Եվ հրամայեց մինչև առավոտ պահել նրան:

3. Հաջորդ օրը թագավորը իր մոտ բերել տվեց սուրբ Գրիգորին և ասաց նրան. «Ե՛մանալով օտար երկրում կրած քո տառապանքների մասին, և չմոռանալով ինձ մատուցած քո ծառայությունները, ցանկանում էի վարձատրույց լինել քեզ՝ տալով պաշտոններ և ընծաներ»:

4. Գրիգորն ասում է թագավորին. «Աստվածաշունչը բերն ասում են, որ պետք է նազանդ լինել մարմնավոր տերերին. ես, ինչպես դու ասացիր, ամբողջ սրտով ծառայեցի քեզ, բայց պետք չէ կենդանի Աստուծո փոխարեն պաշտել ու պատվել ուրիշին: Միայն ես՝ է տեղը մարդկանց և հրեշտակների, որոնք հավիտյան փառավորում են նրա անձանույնի մեծությունը, որովհետև ես՝ է հիմնադրել երկիրը, ես՝ է մարդուն կերտել, որպեսզի հանապազորդ կատարի նրա պատվիրանները և պաշտի նրան, որպեսզի՜ ամեն մի շունչ, որ զտնվում է երկնքում, երկրում և ծովում փառավորի արարչին և կենարարին»:

5. Տրդատը դալբացած ասաց. «Ե՛րբուր էին ինձ համար կրած քո տառապանքները: Քո ազատությունը փոխարինելու եմ բանտով, պաշտոններդ՝ անարգանքով, իսկ նվերների և երջանկության փոխարեն՝ կպանքներ եմ տալու և ապրելու հույսը կտրող վճիռ, եթե չփութաս երկրպագել մեր աստվածներին, նախ ե առաջ մեծ Արտեմիսին²², որ մեծագույն փառք և կյանք է պարգևում մեր ազգին: Հենց ինքը Դիոկլետիանոս կայսրը, որ աստվածներին է պաշտում, տիրում է ամբողջ աշխարհին»:

6. Գրիգորը պատասխանում է նրան. «Ես իզուր չեմ համարում իմ՝ կրած տառապանքները, որովհետև ես դրանով՝ ըստ սուրբ գրքի՝ ենթարկվեցի երկրային տիրոջ, որպեսզի դրա համար վարձատրույց լինեմ կենդանի Աստծուց տեսանելի և անտեսանելի ամենայնի արարչից, ով և պատվիրեց այդպես անել: Ես չէի էլ մտածում ստանալ քեզանից անցողիկ նվերներ, երբ առկա են հավիտենական բարիքները»:

7. Ե՛րբ դու ինձ սպառնում ես անարգանքով, բանտով և մահով, դու դրանով [հավիտենա-

²² Հայ հեթանոսական աստվածությունների անունները հունարեն են թարգմանված: Այսպես՝ Անահիտ=Արտեմիս, Տիր=Ապոլոն, Բարշամին=Հեռա, Արամազդ=Ջես, Նանե=Աթենա, Միհր=Դիոնիսոս, Աստղիկ=Աֆրոդիտե (Documents, p. 129):

կան] կյուր ևս նախապատրաստում, մոտեցնում ևս Քրիստոսին, մեր Աստծուն, ճաշակելու հավիտենական Աստծո հետ լինելու մշտնջենական ուրախությունը, որի թագավորությունը և բարիքներին վերջ չկալնրը դու ինձ աստիճանների փոխարեն մա՜ն ևս նախապատրաստում, ապա դու ինձ ուղարկում ևս հրեշտակային կյանք վարելու ևս նախապատրաստում, հաղորդակից դարձնելով Քրիստոսի կապանքներին, որը շարժարաններ և կապանքներ կրեց մե՛զ համար ևս հրճվում ևմ Տիրոջ փառքի ներկայությունից: Դու կարծում ևս, թե զրկում ևս ինձ քեզ հետ լինելուց, բայց նախապատրաստում ևս հավատքի հոր Արարհամի և բոլոր արդարների հետ լինելու մեծ հաճույքը: Սպառնալով ինձ մահով, դու ինձ կյանք ևս տալիս՝ մոտեցնելով Քրիստոսին, որից բոլոր արդարները հավիտենական կյանքի հույսեր ստանալով, ծառայում են կենդանի Աստծուն: Դուք զո՞հ մատուցելով մեռելներին և անշունչ կուրծքերին, անկյալ ևք հավիտենական կյանքից, դուր մեռյալ եր:

8. Եթե Արտեմիսը, որին մեծ աստված ևս անվանում, անշունչ լինելով բո հոգին տանում է ղեպի հավիտենական զոմիք, առանց որե՛կ ոգուտ տալու քեզ: Դուք պատվելով ոսկե, արծաթե և քարե արձանները, ձեզ ևք անպատվում, որովհետև ունենալով հոգի, մեռյալներին ևք սպասարկում: Այդ նյութերը Աստված տվեց՝ մարդկանց պետքերի համար, իսկ դուք կուրորեն պաշտում եք դրանք, անդիմանում եք ձեր սեփական կորուստը: Իսկ ևս կերկրպագեմ և կպաշտեմ ամեն ինչի արարիչ Աստծուն և Որդուն, ով Հոր հետ միասին ամեն ինչ ստեղծեց, և սուրբ հոգուն կենարարա:

9. Թագավորն ասում է Գրիգորին. «Արդյոք ինչպիսի՞ն է ձեր կյանքը, ո՞վ է Քրիստոսը, ի՞նչ է Սուրբ Հոգին, որի մասին խոսում ես: Ասա կարճ: Բայց ևս չեմ ների այն անարդանքները. որ դու ուղղեցիր աստվածների հասցեին, որ դու ապականելի և անշունչ համարեցիր անմահներին:

10. Գրիգորն ասում է. «Ես ո՞ւմ անարգեցի արդյոք, ո՞վ թագավոր. ասում ես, թե քո աստվածներին, որոնք զուրկ են որե՛կ զգայարանից: Չէ՞ որ ձեր հույսը արձանների վրա է: Իսկ մենք ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց՝ Քրիստոսին ենք խոստովանում, որը մարմին ստացավ մե՛զ համար, շարժվեց իսկի վրա և մահացավ, իսկ հարություն առնելով մեզ անմահություն շնորհեց, ով գալու է հատուցելու յուրաքանչյուրին ըստ նրա արարքների, արդարների՝ հրճվաքը դրախտի և երանությունը իր թագավորության, իսկ հանցավորներին և ամբարիշտներին՝ զոմիքը հավիտենական, քանդի նրանք չցանկացան ճանաչել արարչին ամենայնիք:

11. Թագավորն ասում է. «Ինչքան անարգանք, որ թափեցիր աստվածների վրա, այդքան շարժարանքների դառնությունը պիտի ճաշակես, որովհետև դու խորշում ևս ամբողջ Հայաստանին բարիքներ պարգևող մեծ Զևսից ու Արտեմիսից և նրանց մեռյալ անվանումա:

12. Այն ժամանակ նա հրամայեց բարձր կախել սրբին, լերել նրա մարմինը, ազ ցանկ ու բացախ թափել: Եվ թշվառական հրամայեց, որ այդ ամենասարսափելի պատիժը տեի երեք սր:

13. Գրիգորը պատրաստակամությամբ ընդունեց պատիժը: Նա ազոթում էր, աղերսում աստվածային զորությունը՝ հոգեացնել իր թույլ մարմինը և հետևյալ աղոթքն էր ասում. «Ճշմարիտ Աստված, որ անդրանիկ Աստված, Բանով ամեն ինչ ստեղծեցիր ու կազմեցիր և անգույն գոյության կոչեցիր, շնորհք տուր դիմանալու ամբարիշտ բռնակալի ինձ պատճառածին, որպեսզի (մարդիկ) տեսնելով, թե ինչպես դյուրությամբ ևմ տանում ծանր շարժարանքները, դան քո Հոր, քո միածին Որդու և Սուրբ Հոգու իմացությունա:

14. Թագավորը, տեսնելով սուրբ Գրիգորի տոկունությունն ու պատրաստակամությունը, լցվեց զայրույթով և հրամայեց սրբին կտխել մեկ ոտից, վառել ազը և քթին ծխարկել, որպեսզի շնչելով այդ զարշահոտությունը, մեռնի:

15. Իսկ սուրբը զոնություն էր հայտնում Աստծուն և ասում. «Շնորհակալություն քեզ, երկնային Աստված, որ ինձ արժանացրիր Քրիստոսի հավատքի համար կապանքների և բաղձապիսի շարժարանքների ևնթարկվելու: Քանդի զո՞ւ կերտեցիր մարդուն, որպես քո ձեռքերի ստեղծագործություն սիրեցիր նրան և արժանացրիր ընկալել զրախտի երանության մեջ: Բայց բանսարկուի խորհուրդը զրկեց (մարդուն) անմահության երանությունից, որը մեզ նորից շնորհեց մեր Աստվածը, Որդին և Բանն Աստծու, նա ով մարմնացավ մեզ համար, որպեսզի մեր ապականելի մարմինը անապական դարձնելով, ներկայացնի Աստծուն: Նա համաձայնվեց շարժարկել, որպեսզի մե՛զ փրկի շարժարանքից, որպեսզի միացնի մեզ իր աստվածային (էությունը): լինելով լույս ի լույս և կյանք ի կենաց, նա, ով ծնվեց անարատ կույսից, նա, ով էր, է և կլինի և կմնա հավիտյանս հավիտենից՝ Հոր և Սուրբ Հոգու հետա:

16. Սրբ նա ազոթում էր այսպես և արտասանում այս խոսքերը մեծ ուրախությամբ, արագափր դպիրները ամեն մի խոսքը արձանագրեցին, միաժամանակ նշեցին սրբի շերմեռանդությունը:

17. Տրդատ Թագավորը հրամայեց սրբին ներկայանալ իրեն և ասաց նրան. «Դու զեռ շարունակում ևս մնալ քո սին զաղափարների մեջ: Վերադարձի՛ր մեր լավագույն կենցաղավարության և փրկիր քեզա:

18. Սուրբը պատասխանում է նրան. «Ինձ համար կյանքը դա ապագա (կյանքն) է. հոգու հեռանալը մարմնից՝ անմահություն է, ի՞նչ ուղում ևս կատարիր, ո՞վ թագավոր, ալիկի արադ հեռացրու (հոգիս) իմ մարմնից մահվան (քո) վճռով: Ես չեմ կարող այլևս տեսնել քեզ՝ դարշելի կուրծքերին երկրպագողիցա:

19. Թագավորը հրամայեց երկու փայտի կոճղեր բերել և ինչ որ սարքով սեղմել ոտերը, որ (արյունը) հոսի և աճա մատերի ծայրից արյուն կաթեց, կարմիր ներկելով գետինը: Տեսնելով այդ թագավորն ասաց. «Զրո՞ւմ ևս քո հավատքի (խոստացած) կյանքը:

20. Իսկ Գրիգորը պատասխանում է. «Զորություն է տրված ինձ երկնի աստվածային ուժից հաղթող դուրս գալու համար, հարվածելով բեղձ՝ բռնակալիդ և թո՛ղը՝ բանասարկություն»:

21. Թագավորը առավել ևս զայրացավ և հրամայեց դամբար գամիլ (Գրիգորի) ոտքերին (ներբանների տակ) և քանդելով կապանքները, կարգադրեց թիկնապահներին քաշքշել նրան շատ արագ վաղթել և նրա արյամբ ոռոգել փողոցը: Եվ ասում էր ամբարիշտը բարեպաշտին. «Արդյոք դու սա՞ ես անվանում հավիտենական երանություն»:

22. Գրիգորը պատասխանեց. «Աուր զիրքը մեզ ավանդել է հետևյալը. «Անբանի տկարությունամբ և յանձն զօրութեամբ՝ և թեև անարգված ենք, բայց կփառավորվենք»:

23. Նա հրաման տվեց նորից ձեռնել նրան և հարվածել զլիսին, ասելով, «Ա՛ա՛» է թո ասած փառքը: Իսկ սուրբը պատասխան տվեց և ասաց. «Այո՛. աշխատավորն այն ժամանակ է ստանում իր արդար վաստակը, երբ ամեն ինչ կատարում է իր ճակտի քրտինքով»:

24. Իսկ թագավորը (....)⁴ աղ, քացախ և բորակ խառնել և (Գրիգորին) մեջքի վրա պառկեցնելուց հետո եղեգն խողովակով նրա թթանցքին էր հոսեցրել: Այնուհետև նա հրամայեց տուրակի մեջ դնել մոխիր, ապա այդ (տուրակի) մեջ խոթել սրբի զուխը և վզին կապել, որպեսզի չնշելով բարձարցնի մոխրի փոշին: Դրանից հետո նա ասաց սրբին. «Ճաշակեցի՞ր ձեր զրախտային կյանքը: Իսկ նա պատասխանեց. «Այս մոխիրը անթառամ ծագիկներից պատրաստված պսակ բերեց ինձ»:

25. (Թագավորն) այնուհետև հրամայեց գետինից քրիվ տալ երկաթե տատասկներ, ապա մերկացնել սրբին և քարշ տալ, որպեսզի գետինը արյամբ ողողվի: Թագավորը զարմանում էր, թե ինչպես էր նա շարունակում կենդանի մնալ, որ այսքան օրեր ամենատարբեր չարչարանքների էր ենթարկվել: Ապա հրամայեց կապար հալեցնել և թափել նրա ամբողջ մարմնի վրա, դուցե այդ կերպ կկարողանար սպանել նրան:

26. Բայց սուրբը այդ պատիժն էլ արիությանբ ընդունեց, փառաբանելով Աստծուն, ով նրան կարողություն տվեց դիմանալու ծանր պատիժներին: Հաջորդ օրը թագավորը նրան իր մոտ բերել տալով, ասաց. «Ես ապշել եմ և զայրացել, թե ինչպես դու այսքան տառապանքներ կրելուց հետո, զեռ կենդանի ես»:

27. Իսկ սուրբ Գրիգորն ասում է նրան. «Եմ Աստվածը վերիից զորություն ընձեռեց ինձ՝ պատրաստակամության տանելու պատիժները: Ես չեմ վախենում հրաժարվելու և ապականության հանձնելու իմ մար-

մինը, քանզի նա նորոգվելու է, և անապական դառնալու: Այսպիսի ավետամից արիություն ստանալով, մենք քրիստոնյաներս պահպանվում ենք շնորհիվ Քրիստոսի:

28. Տրդատը վերջին վճիռն արձակեց, հրամայեց նրան շղթայակապ տանեն Արտաշատ քաղաքը և նետեն վիրապը, որտեղ բազում լուսավոր օձեր կային և որտեղ մահապատժի էին ենթարկվում նրանից առաջ (մահապարտները): Վիրապը լի էր իժմերով և կարիճներով, բայց երբ սուրբն իջավ վիրապը, օձերը մի կողմ քաշվեցին, նա սնվում էր Քրիստոսի շնորհքով. քաղաքում ապրող մի բարեպաշտ կին հաց և չուր էր բերում վիրապը:

29. Սրանից հետո Տրդատը հրաման արձակեց Մեծ Հայքի ամբողջ երկրով մեկ՝ ուղղված կուսակալներին, շահապետներին և նախարարներին, որի բովանդակությունը հետևյալն էր. «Իմ իշխանությանը ենթակա կուսակալներին, շահապետներին, զորավարներին և ամբողջ ժողովրդին, ողջունեմ Քրիստոնյաների պիղծ դավանանքը հայտնաբերվեց մեզ շատ սիրելի մի էակի մոտ, և նկատի ունեմ Գրիգորին: Մենք ամենադաժան չարչարանքների ենթարկելով նրան, վիրապը նետեցինք՝ Արտաշատ քաղաքում և իսկույն սպանեցինք: Պետք է, որ մենք այդ մասին հայտնեինք ձեզ: Արգ, հրամայում եմ ձեզ հայտնաբերեք նրանց (քրիստոնյաներին) և կալանավորելով մեզ ներկայացնեք: Եթե որևէ մեկը նրանց թաքցնի, նրան սպասում է ամենազաժան մահը: Եթե մենք չխնայեցինք մեզ սիրելի Գրիգորին և այնքան պատիժներից հետո ուշարկեցինք, որ սպանվի օձերի և իժմերի կողմից, ևս էլ ո՞ւմ կարող եմ խնայել: Յուրաքանչյուրը մտքում ունենալով թագավորի երկնությունը, զգոն եղեք. ով կհայտնի նրանց մասին, կարժանանա պարգևների, իսկ ով որ թաքցնի նրանց, կամ այս գործում անգոսնի՝ կպատժվի»:

30. Որոշ ժամանակ անց հռոմայեցիների կայսր Դիոկղետիանոսը (իր) հավատարմագույն մարդկանցից ուղարկեց հռոմայեցիներին հպատակ բոլոր քաղաքները, ասելով, որ գտնեն մեծամեծների գուստրերից ամենազեղեցիկին և իր մոտ բերեն՝ կնության առնելու համար:

31. Այդ գործի համար ուղարկված մարդիկ շրջեցին և կանանց մի մենաստանում հանդիպեցին անբիժ ու սուրբ կույսերի, որոնք շատ առաքինի կերպով քրիստոնյաների հավատքն էին պաշտում: Սրանց առաջնորդն էր Փայանեն, որը իր մոտ զեռ մանուկ հասակից ուներ հռոմայեցի մի հյուպատոսի դուստր, անունը Հոնիփսիմն, որին նա դաստիարակել էր և սովորեցրել աստվածաշունչ զրուրբը: Այս Հոնիփսիմնն մյուսների հետ իր կուսությունը նվիրել էր Քրիստոսին. նա շատ զեղեցիկ էր և իր զեղեցկությունները զերպանցում էր բոլոր կանանց: Սրանց սնունդը բաղկացած էր սերմերից, որ թրջում էին ջրի մեջ:

(Շաբուրեակելի)

³ Ա. կորնթ. ԺԺ, 43:

⁴ Անընթեռնելի բառերի տեղ Աղաթանգեղոսն ունի «Եւ ետ հրաման բերել աղ և բորակ և բարկ քացախ» (Էջ 63), իսկ արաբական Վարքը «Եւ ահա հրամայեաց զի բերեցն քացախ և բորակ» (Մկրտումբին Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց, էջ 3):